

Հաննէս եւ Անտոն Սարգիսեան, եւ կը հաղորդեն եւս « քէօթահայու տետէ Զօհաննէս վարդապետին », Հոկտմբ.ին եկած նամակաւ զըկած ողջոյն: Սոյն Տէտէ Զովհաննէս վ. 1764ին կարնէն կուտինա եկած էր, եւ հոն կաթողիկէ վարդապետութիւնը քարոզած (Տաշեան, էջ 991): Գարձեալ 18/29 Նոյ. 1772ին ի Ղուբուշէճմէ գրուած նամակին մէջ ստորագրողն Պետրոս ցաւ կը յայտնէ մեկնելուն համար, եւ ներողամտութիւն կը խնդրէ զինքը վշտացընողներուն համար: Նոյն նամակին վրայ ստորագրած է նաեւ «Alessandro Mighirdici di Pietro» որ Պետրոսին որդին կ'երեւայ: 8 Գեկա. 1772ին ի Կ.Պոլիս « Պետրոս տի Զաքարիա », եւ « Պետրոս տի Մուրատ », կը հաղորդեն ի մէջ այլոց թէ « Ազնուական Աբրահամ աղան եւ Սրապիոն աղան խուլլելեանք բազում սիրով ողջոյն մատուցանեն: » 22 Մարտ 1773ին ի Կ.Պոլիս արքունի փողերանոցի մէջ կը գրէ « գալուս մարքարեան » Սարգսի դրամներուն փոխադրութեան մասին ի ձեռն « Փեթրօ Զաքարիայի »: 3 Ապր. 1773 ի Կ.Պոլիս « Պետրոս տի Զաքարիա » կը գրէ դրամներու փոխադրութեան մասին, եւ թէ գրքերը վննեաիկ կը ղըկէ արկղով: Կ'ողջունեն. կ'ըսէ, « Աբրահամ աղան եւ Սրապիոն չէլէպին, Պատուելի Սեղբոսեան աղայնք, Եղբայրս Յակօր Աղան, Մուրատեան Պետրոս աղան եւ Անտոն աղան... »: 14 Սեպտ. 1772 ի Կ.Պոլիս գրուած նամակաւ « Միլիճանեանց Մկրտիչ » կը պայմանաւորի Սարգսի հետ, որ վերջինս « զՄար-